

ԿԱՆՈՆՆԵՐ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ (ՎԱՐՔԱԳԾԻ)

Սույն կանոններով սահմանվում են «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) սովորողների (այսուհետ՝ Սովորող) ներքին կարգապահական (վարքագծի) կանոնները (այսուհետ՝ Կանոններ):

Սովորողը (Աշակերտը) պարտավոր է անվերապահորեն պահպանել և կատարել Կանոնները և դրանց խախտման համար պատասխանատվություն է կրում Կանոններով, Հիմնարկի և Սովորողի ծնողի միջև կնքված պայմանագրով, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

1. Սովորողն իրավունք ունի՝

- 1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին, հանրակրթական ծրագրերին համապատասխան կրթություն,
- 2) ծնողի համաձայնությամբ ստանալու Հիմնարկի կողմից մատուցվող այլ վճարովի ծառայություններ,
- 3) անվճար օգտվելու Հիմնարկի ուսումնանյութական բազայից,
- 4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների,
- 5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են Սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը,
- 6) Հիմնարկի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով մասնակցելու Դպրոցի կառավարմանը,
- 7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
- 8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները,
- 9) օգտվելու օրենքով, այլ իրավական ակտերով և Հիմնարկի կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

2. Սովորողը պարտավոր է՝

- 1) այլ սովորողների հետ փոխհարաբերություններում լինել հարգալից, հանդուրժող և արդարամիտ,

- 2) բարեխղճորեն և խնամքով վերաբերվել Հիմնարկի գույքին, չվնասել այն,
- 3) կրթական և այլ ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծելիս նույն պահին (անհապաղ) Հիմնարկին վերադարձնել իրեն տրամադրված դասագրքերը կամ այլ գույքը,
- 4) պահպանել սանիտարահիգիենիկ կանոնները,
- 5) հարգալից վերաբերվել ուսուցիչներին և Հիմնարկի այլ աշխատակիցներին,
- 6) Հիմնարկում և դասարանում առաջացած խնդիրների դեպքում դիմել դասվարին կամ դասղեկին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ Դպրոցի այլ աշխատակիցներին,
- 7) Դպրոց ներկայանալ ոչ ուշ, քան ժամը 8:25-ին և մուտք գործել չիպային թևնոցի կիրառմամբ,
- 8) մասնակցել Հիմնարկում և (կամ) Դպրոցում կազմակերպվող միջոցառումներին (մաքրության օրերին, արշավներին, տոնակատարություններին, հավաքներին, կոլեկտիվ այցերին թանգարաններ, համերգասրահներ և այլն) և աշխատանքներին,
- 9) Հիմնարկի և (կամ) Դպրոցի առօրյային վերաբերող հարցերում ենթարկվել Հիմնարկի աշխատակիցներին (ուսուցիչներին և այլ իրավասու աշխատակիցներին),
- 10) կոլեկտիվ (դասարանական) միջոցառումները (ծնունդ, խնջույք և այլն) Հիմնարկի տարածքում անցկացնել (կազմակերպել) դասվարի կամ դասղեկի համաձայնությամբ,
- 11) մասնակցել դասարանական ժողովներին, քննարկումներին,
- 12) դասի սկիզբը հայտարարվելուց անմիջապես հետո անջատել բջջային հեռախոսը և տեղադրել դրա համար նախատեսված պահարանում, մտնել դասասենյակ և սպասել ուսուցչին (ուսուցչի բացակայության դեպքում դասարանի ավագը կարող է դուրս գալ դասասենյակից և այդ մասին տեղյակ պահել Հիմնարկի տնօրինությանը),
- 13) դասերից բացակայելու դեպքում հաջորդ օրը ներկայացնել բժշկի կողմից տրված համապատասխան տեղեկանք (առկայության դեպքում) կամ ծնողի կողմից գրված բացատրագիր՝ բացակայության պատճառի մասին: Ծնողը բացակայության մասին կարող է նաև նախապես բանավոր տեղեկացնել դասվարին կամ դասղեկին,
- 14) դասերին ներկայանալ պատշաճ տեսքով՝ լինել կոկիկ, խնամված,
- 15) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին և հանրակրթական ծրագրերին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները:

3. Սովորողին արգելվում է՝

- 1) ուշանալ դասերից,
- 2) մինչև դասերի ավարտը դուրս գալ Հիմնարկի և (կամ) Դպրոցի տարածքից, առանց ուսուցչի թույլտվության,
- 3) դասերի ավարտից հետո առանց ծնողի կամ ուսուցչի հսկողության դուրս գալ Հիմնարկի և (կամ) Դպրոցի տարածքից, բացառությամբ՝ միջին և ավագ Դպրոցների Սովորողների,

- 4) դասամիջոցների ընթացքում դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ,
- 5) դասամիջոցի ավարտից հետո մնալ միջանցքում,
- 6) բռնություն գործադրել և (կամ) բռնության սպառնալիք պարունակող արտահայտություններ անել,
- 7) վիրավորական կամ ոչ պարկեշտ արտահայտություններ անել այլ Սովորողների, ուսուցիչների կամ Հիմնարկի այլ աշխատակիցների նկատմամբ,
- 8) Հիմնարկի և (կամ) Դպրոցի տարածք բերել չթույլատրվող սնունդ, թղթախաղ, թանկարժեք իրեր, կտրող-ծակող իրեր կամ գործիքներ, պայթուցիկներ, զենք կամ շրջապատի համար վտանգավոր այլ գույք,
- 9) դասերին ներկայանալ ոչ սթափ վիճակում,
- 10) դասերին ներկայանալ սպորտային հագուստով, զարդերով, շպարված, ներկած մազերով, մատնահարդարմամբ,
- 11) ծխել, օգտագործել ոգելից խմիչքներ, հոգեմետ դեղեր և այլ արգելված դեղամիջոցներ, թմրանյութեր,
- 12) Հիմնարկի և (կամ) Դպրոցի տարածք հրավիրել ընկերներին, մտերիմներին, ծանոթներին,
- 13) Հիմնարկի և (կամ) Դպրոցի տարածքում չնախատեսված վայրում աղբ թափել, աղտոտել, կորցնել Հիմնարկի կողմից տրամադրված գույքը կամ իրերը՝ դասագրքերը, չիպային թևնոցը և այլն,
- 14) Հիմնարկին պատկանող գույքը կամ իրերը հանել Հիմնարկի տարածքից, բացառությամբ՝ դասագրքերի և չիպային թևնոցի կամ թույլատրված այլ գույքի:

4. Սովորողի նկատմամբ կիրառվող խրախուսման միջոցները.

1) Սովորողի կողմից պարտականությունները բարեխղճորեն կատարելու, ուսման և վարքի առանձնահատուկ դրսևորումներ ցուցաբերելու, Հիմնարկի հասարակական կյանքում, արտադասարանական միջոցառումներում ակտիվ մասնակցություն դրսևորելու դեպքում Սովորողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ խրախուսման միջոցները՝

- ա) ուշադրություն՝ ծափահարություն, գովասանք և այլն,
- բ) շնորհակալագիր, գովասանագիր, պատվոգիր և այլն,
- գ) կրթաթոշակների տրամադրում,
- դ) ուսումնական պլանից դուրս էքսկուրսիաների կազմակերպում:

Սույն կետի «ա» ենթակետով սահմանված Սովորողի նկատմամբ խրախուսման միջոցները, դրանց կիրառման հաճախականությունը ընտրում է դասվարը կամ դասղեկը, իսկ «բ», «գ» և «դ» ենթակետերով սահմանված խրախուսման միջոցի կիրառումը համաձայնեցվում է Հիմնարկի տնօրենի հետ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում:

5. Սովորողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը.

1) Կանոնների կամ այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու համար միջին և ավագ դպրոցի Սովորողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

ա) նկատողություն,

բ) խիստ նկատողություն.

2) Սովորողի նկատմամբ կարգապահական տույժը կիրառվում է Հիմնարկի տնօրենի հրամանով՝ կարգապահական հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա.

3) յուրաքանչյուր դեպքում կիրառվող կարգապահական տույժի տեսակը ընտրում է Հիմնարկի տնօրենը՝ հաշվի առնելով Սովորողի կատարած խախտման բնույթը, դրա հաճախակիությունը, Սովորողի մեղքի առկայությունը և կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը.

4) Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառվելու (նշանակվելու) օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կարգապահական տույժը կարող է հանվել դասվարի կամ դասղեկի հիմնավորված միջնորդագրի հիման վրա, եթե տվյալ Սովորողը կարգապահական նոր խախտում թույլ չի տվել և դրսևորել է իրեն որպես բարեխիղճ, օրինակելի և կարգապահ Սովորող.

5) Կանոնների խախտումը կարող է հիմք հանդիսանալ Սովորողի ծնողի և Հիմնարկի միջև կնքված կրթական և այլ ծառայությունների մատուցման պայմանագրի լուծման համար: